

## ԿԱՐՄԻՔ

Սոյոպա Հայրապետի Պետոյանի «Շուշի քաղաքի գրատպության պատմությունը (1828–1920 թթ.)» Է.00.01-Հայոց պատմություն մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Ամբողջ տեքստը կազմում է 197 էջ:

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են աշխատանքի հիմնական նպատակներն ու խնդիրները, պարզաբանվում է գիտական նորույթը, հիմնավորվում աշխատանքի գործնական նշանակությունը, տրվում են թեմայի ժամանակագրական սահմանները և օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսությունը, ինչպես նաև մեթոդաբանությունը:

Ըստ հեղինակի՝ ատենախոսության գիտական նորույթն այն է, որ հետազոտությունն իր բովանդակությամբ ու կառուցվածքով հայ պատմագիտության մեջ առաջին համապարփակ ուսամնասիրությունն է, որում տրվում է 1828-1920 թթ. Շուշիի գրատպության պատմությանն առնչվող հիմնահարցերը: Այն լուսաբանում է Շուշիի գրահրատարակչական կյանքը Ռուսական կայսրության օրենքների և գրաքննության պայմաններում:

Ուսումնասիրության աղբյուրագիտական հիմքն են կազմում տարաբնույթ արխիվային նյութերը՝ Հայաստանի, Վրաստանի և Ռուսաստանի ազգային դիվանների: Արժեքավոր են եղել նաև փաստաթղթերի ժողովածուները, հաշվետվությունները, ձեռագրացուցակները, մատենագիտական ցանկերը, աղբյուրագիտական նշանակություն ունեցող աշխատությունները: Նշվում է, որ Շուշիի գրատպության պատմության հարցերով հպանցիկ զբաղվել է անվանի պատմաբան Լեոն:

Արդյունքում ֆիքսվում է, որ Շուշիի գրատպության պատմությունը առ այսօր խորությամբ չի ուսումնասիրվել: Կարևորվում է անվանի մատենագետ-հետազոտողների ուսումնասիրությունները:

Ատենախոսության առաջին գլխում՝ «Բազելյան բողոքական քարոզիչների տպարանը Շուշիում և նրանց գրահրատակչական գործունեությունը 1827–1835 թվականներին» բաղկացած էրեք ենթագլուխներից, լուսաբանվում է քարոզիչների ի հայտ գալը, տպարանի հիմնադրումը և գործունեությունը: Հակիրճ ձևով տրվում է Հայոց եկեղեցու կառավարիչ Ներսես Աշտարակեցու միջնորդությունը նրա ստեղծման մասին, առավել ևս, որ 1821-1833 թթ. Ս. Էջմիածնի տպարանը չէր գործում: Շեշտվում է Կովկասի գլխավոր կառավարիչ Ա.Պ. Երմոլովի մոտեցումը, որ քարոզիչները առանց համայնք ստեղծելու պետք է զբաղվեն նախատեսված դասագրքերի և Սուրբ Գրքի զանազան լեզուներով հրատարակման գործով: Իրականում նրանք 1825 թ. Շուշիում բացեցին իրենց դպրոցը, որի աշակերտների մեծ մասը հայեր էին: Մեկ տարի անց նրանք պաշտոնական իրավունք

ստացան դպրոց և տպարան հիմնելու մասին, ինչպես նաև ձեռք բերեցին որոշակի պատրաստակամություն Լազարյանների ճեմարանում:

Ատենախոսք Շուշիի քարոզիչների գործունեությունը բաժանել է երեք հասովածի՝ քարոզչական, կրթական և հրատարակչական: 1827 թ. սկսվեց լայնածավալ գործունեություն: Հիմնադրվեց տպարանը, իսկ ուսումնարանում կար 130 հայ ուսանող: Քարոզիչների ակտիվ գործունեությունը առաջացրեց բախում հայ հոգևորականության հետ: Արդյունքում, 1835 թ. հուլիսի 23-ին Ներքին գործերի նախարարությունը արգելում է Շուշիի քարոզիչների գործունեությունը՝ թույլատրելով զբաղվել միայն հողագործությամբ և արհեստներով:

Շուշիի քարոզիչների կողմից հրատարակվեց 29 անուն հայերեն գրքեր, որոնց տպաքանակը կազմում էր 35.000 միավորից ավելի: Նրանցից 14-ը եվրոպական լեզուներից թարգմանված կրոնագիտական ուսումնասիրություններ են, որոնց քանակը հավասար էր 19.300 միավորի, իսկ 15 դասագրքային հրատարակություններ կազմում էին 15.864 միավոր: Այսինքն նրանց հարաբերությունը կազմում էր համապատասխանաբար 55,1% և 44,9%: Հետևապես արդարացի է ատենախոսի եզրակացությունը, որ Շուշիի բողոքական տպարանը հետապնդում էր ոչ միայն քարոզչական նպատակներ, այլ նաև կրթական (էջ 50), ինչը ապահովում է նրա ուրույն դերը հայ տպագրության պատմության մեջ (էջ 55):

Ատենախոսության երկրորդ գլխում՝ «Բաղդասար մետրոպոլիտի տպարանը և նրա գրահրատարակչական գործունեությունը 1830-1850-ական թվականներին», պարունակող երեք ենթագլուխ, ներկայացվում է անվանի արքեպիսկոպոսի «եկեղեցական եռանդը» հրատարակչական ասպարեզում: Բաղդասար մետրոպոլիտը 1837 թ. գնում է Բագելյան բողոքական քարոզիչների տպարանը, նպատակ դնելով զարգացնել և լուսավորել ժողովրդի առաջադիմությունը: Այդ նպատակով 1838 թ. Շուշիում բացվում է Ղարաբաղի թեմական հոգևոր դպրոցը, որտեղ սովորելու իրավունք ունեին հոգևորականների և աշխարհականների զավակները: Դպրոցը գոյատևեց մինչև 1844 թ.՝ ֆինանսական հիմք չունենալու պատճառով:

Ավելի արդյունավետ էր տպարանի գործունեությունը 1837-1840 թթ.: Շուշիի տպարանում լույս տեսավ հայոց լեզվով 12 անուն գրքեր: Ներկայացվում է 1837 թ. Շուշիում տպագրված Չորջ Բայրոնի «Շիրիոնյան կալանավորը» գրքույկը՝ գրող Մովսես Չոհրապյանցի թարգմանությամբ: Տպագրվում է նաև Աղվանքի կաթողիկոս Եսայի Հասան-Չալալյանի «Պատմություն Աղվանից աշխատությունը» և «Համառոտ հայկազյան քերականությունը» քին. Տեր-Հոհանյանցի: Սակայն, արքեպիսկոպոսի հրատարակչական գործունեությունը սահմանափակում էին պետական օրենքը՝ ի դեմս 1836 թ. «Պոլոժենիեն» և Ամենայն Հայոց կաթողիկոսության հոգևոր իշխանությունը իրականացնող Մինոդի միջոցով գրաքննությունը:

1840-1850 թվականների համար կարևոր էր եռահարկ առաջնորդարանի կառուցումը, որտեղ տպարանը սկսեց գործել: 1844 թ. ներքին գործերի նախարարությունը հաստատեց և գրաքննության իրականացումից հետո, տպարանում հրատարակվեցին գրքերը: Տպարանի գոյությունը համարվեց օգտավետ, հրահանգվում է բոլոր հետագա

հրատակությունները իրականացնել սահմանված գրաքննական կանոններով, այսինքն Էջմիածնի Սինոդի միջոցով: Տպարանի գործունեությունը վերահսկում էր անձամբ արք. Բաղդասարը: Այնուամենայնիվ, ատենախոսը հանգում է այն եզրակացության, որ, ամենայն հավանականությամբ, տպարանում 1841-1854 թվականներին գրքերի տպագրությունը չի իրականացվել: Այդ ընթացքում տպարանը տպագրել է գործավարության թերթիկներ, չափաբերական մատյաններ և պաշտոնական ձևաթղթեր, ինչպես նաև տարաբնույթ աշխատանքներ: Դրա պատճառն էր Ղարաբաղի թեմի սուղ միջոցները: 1857 թ. հունիսին արքեպիսկոպոս Բաղդասարը վախճանվեց՝ կտակելով առաջնորդարանի շենքը և տպարանը ս. Էջմիածնին:

Այս ժամանակի մասին ատենախոսը հանգում է երկու կարևոր եզրակացության: Նախ, արքեպիսկոպոս Բաղդասարի օրոք «պարզ չի» տպարանում քանի գիրք է տպագրվել: Եկրորդ, շրջանի տպագրված գրքերը, բացառությամբ «Շիլոնի կալանավորի», «պայմանականորեն» բաժանվում է երկու խմբի՝ ծիսական գրքերի և դասագրքերի (էջ 79, 80):

Պետք է նշել, որ այդ շրջանում սկսել էր գործել Մայր Աթոռի թեմական հոգևոր դպրոցի համակարգը: Այսպես, 1842 և 1851/1852 թթ. սովորողների թիվը կազմում էր Էջմիածնում՝ 37 և 33, Աստրախանում՝ 3 և չկար, Թիֆլիսում՝ 140 և 207, Շուշում՝ 66 և չկար, Երևանում՝ 45 և չկար<sup>1</sup>:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «Ղարաբաղի թեմական հոգեվոր դպրոցի տպարանը (XIX դարի կեսեր - XX դարի սկիզբ)», ունի երկու ենթագլուխ: Առաջինը ներկայացնում է տպարանի ուսումնական և կրթական ուղղվածությունը 1850 -1870 -ական թվականներին: Այս փուլի տպարանի գործունեության վրա բացասաբար ազդել է թեմականների հաճախակի փոփոխությունը: Բաղդասար արքեպիսկոպոսի մահվանից հետո առաջնորդ էին եղել վիճակային եպիսկոպոս Հ. Մարգարյանը, եպս. Գ. Վեհապետյանը, արքեպիս. Ս. Բաղայանը և արքեպս. Ս.Ջալալյանը և այլն<sup>2</sup>: Եպիսկոպոս Գևորգ Վեհապետյանի ժամանակ հրատարակվում են միայն երկու գիրք՝ «Ձեռաց Մաշտոցը» (1858) և Ս. Չամչյանի քերականության դասագիրքը (1859): Վերջինս նախատեսված էր թեմական հոգևոր դպրոցի սաների համար: Երկու գրքերի տպագրումը նշմարեց տպարանի գործունեության անկումը: Դրա հետևանքով 1859 թ. դեկտեմբերի 4-ին կաթողիկոս Սատթեոս Ա կոնդակով հասատեց Ղարաբաղի թեմական հոգևոր դպրոցի «Կանոնադրությունը»: Այն պետք է ապահովեր հասարակության անդամների լուսավորումը<sup>3</sup>:

Եպիսկոպոս Վեհապետյանը չարաշահումների հետևանքով, հատկապես տպագրության ասպարեզում, հեռացավեց թեմական պաշտոնից: Դրա հետ մեկտեղ ուժեղացել էր Շեմախի նահանգի հայ բողոքականների գործունեությունը<sup>4</sup>:

Այս պայմաններում, ըստ Ս. Պետյանի, դրական նշանակություն ունեցավ 1858 թ. Շուշիում բացված «Ընթերցասիրաց ընկերությունը», որը գործել է մինչև 1867 թ.: Միայն

<sup>1</sup> Тунян В.Г., Эчмиадзинский вопрос в политике России 1873 -1903 гг., Ер., 2002, с. 9.

<sup>2</sup> Тунян В. Г., Католикос всех армянам Матеос I Чухаджян 1858- 1865, Св. Эчмиадзин, 2021, с.194.

<sup>3</sup> Там же, с. 115.

<sup>4</sup> Там же, с. 113.



1863 թ. Շուշիի Էջմիածնական տպարանում լույս տեսավ «Ներածություն Աստվածաբանական գիտելեաց» գիրքը: Թեմական հոգևոր դպրոցում դժգոհությունը տպարանի կառավարման շուրջը նպաստեց, որպեսզի այն անցնի դպրոցի հոգաբարձությանը: Դա և Պետրոս Շամշյանի նշանակումը որպես տեսուչ նպաստեց տպարանի գործունեության ակտիվացմանը: 1864 թ. հրատարակվեց առնվազն երեք գիրք: Տպարանի նոր վերելքը սկսվեց 1865 թ. սրբ. Սարգիս Չալալյանցի օրոք, որի ժամանակ գրանցվեց թեմի ֆինանսական հենքի աճը: Տպագրվեցին մի շարք գրքեր, այդ թվում 1866 թ. «Համառոտ պատմություն Հայոց», իսկ 1870 թ. «Ավետարանը»: Ատենախոսը նշում է, ըստ 1870-1873 թթ. ֆինանսական հաշվետվությունների, տպարանի գործունեությունից առաջացած մուտքերը: Կարևոր էր նաև 1874 թ. հունվարի 1-ին «Հայկական աշխարհ» հանդեսի վերահրատակումը Շուշիում: Սակայն հրատարակվեցին մի քանի համարներ: 1874-1877 թթ. Շուշիում տպագրությունը կասեցվում է՝ Կովկասի հրատարակչության կոմիտեի կարգադրությամբ:

Երկրորդ ենթագլխում ներկայացվում է տպարանային գործունեության վերսկսումը Շուշիում: 1877 թ. Սահտեսի Հակոբյանցների խնդրագիրը նոր տպարանի բացման մասին հաստատվում է Կովկասի իշխանությունների կողմից: Նախապատրաստական միջոցառումներից հետո տպարանը սկսում է գործել 1886 թ.: Դրա համար կային նախադրյալներ, առավել ևս, որ 1873 թ. ս. Էջմիածինը ձևավորեց Ռուսական կայսրությունում ինքնուրույն ուսումնական համակարգը՝ իր թեմական տեսուչներով<sup>5</sup>:

Նույն թվականին Ղարաբաղի կոնսիստորիան իրավունք ստացավ բացել գրավաճառանոց՝ վերաբացված տպարանին կից: Սկսվեց երկու տպարանների երկու տասնամյակ տևող մրցակցությունը: Բացի դրանից կարևոր երևույթ էր 1888 թ. փետրվարին Շուշիում բացված գրադարան-ընթերցարանը: Այն գտնվում էր հոգևոր դպրոցին կից, որի վարձակալներն են երեք տարով դառնում Վահրամ և Սմբատ Դադյանց եղբայրները: 1887 թ. նրանք հրատարակում են 2 գիրք, 1888 թ.՝ հինգը և 1889 թ.՝ երկուսը: Հրատարակված գրքերը ունեին որոշակի ուղղություններ՝ բանաստեղծական, վիպական, պատմական, կրոնական, կենսագրական, դասագրքային, առողջապահական, տեղեկատվական: Այսինքն, Դադյանցների գրքերն ուղղված էին մասսայական սպառման համար: Նշենք՝ 1888 թ. տպագրված Լեոյի «Վահան Մամիկոնյան» գիրքը: Կար նաև «մանր տպագրություն» երկրորդական ամեն տեսակի պատվերներ հանուն շահութաբերության՝ թատերական ծրագրեր և ազդագրեր: 1893 թ. դպրոցի եկամուտների մեջ նշվում է տպարանից ստացած 250 ռուբլին: 1893-1894 թթ. տպարանի կառավարչի պաշտոնյաները հաճախակի փոխվել են, ինչը առաջացրեց բացասական հետևանք տպարանի գործունեության համար:

1907 թ. հոգևոր դպրոցի տպարանն անգործունեության մատնվեց: Պատճառն էր տպագրական մեքենաների հնությունը և տառերի սակավությունը:

Ատենախոսության չորրորդ գլուխը՝ «Շուշիի մասնավոր տպարանները», ունի երեք ենթագլուխ: Առաջին ենթագլուխը նվիրված է շուշեցի Մինաս Տառղիճյանցի տպարանի գործունեության պատմությանը (1851-1864), որտեղ լույս են տեսել դասագրքեր,

<sup>5</sup> Тунян В.Г., Эчмиадзинский вопрос. ..., с. 3-6.

կրոնական և ընթերցելի գրքեր՝ լինելով վերատպություններ, ձգտելով հասնել շահութաբերության: Պարզվում են տպաքանակը, գները և սպառումը:

Երկրորդ ենթագլուխը տալիս է Մահտեսի-Հակոբյանցների տպարանի փաստացի առկայությունը 1878 թ.-ին, երբ Այբբենարանի մի ձեռագիրը ներկայացնում է Կովկասի գրաքննական կոմիտեին, հրատարակման համար: Մահտեսի-Հակոբյանցը Շուշի բողոքականների առաջնորդն էր, ինչը առաջացրեց լարվածություն հայ առաքելականների հետ: Ի սկզբանե տպարանը ունեցել էր հայկական, ռուսական և թուրքական տառատեսակներ: Հենց այդ տպարանում որպես սրբագրիչ աշխատեց անվանի Լեոն: Տպարանում հրատարակվեցին 1881 թ. մի քանի գրքեր երեխաների, ծնողների և հասարակության համար: Հետագայում լույս են տեսնում առանձին գրքեր: Ձեռնարկվեց "Шушинские объявления" թերթի հրատարակման 1885 թ. փորձը, որը չիրականացավ: Նույն ճակատագրին արժանացան «Սուրհանդակ» թերթի 1886 թ. և «Միություն» 1889 թ. հրատարակման նախագծերը:

Այնուամենայնիվ ատենախոսը եզրակացնում է, որ XIX դ. վերջում Շուշիում տպագրական գործը ծաղկում էր ի շնորհիվ Մահտեսի-Հակոբյանցի գործունեության: Անդրկովկասում Թիֆլիսից հետո հայերեն գրերի հրատարակության մեջ, Շուշին գրավում էր առաջին տեղը: Անկախ դրանից 1902 թ. Մահտեսի-Հակոբյանցը սկսում է գործել Թիֆլիսում համագործակցել շուշեցի Ավետիք Թառույանցի հետ: Այստեղ նա ձեռնարկում է հայալեզու թերթերի հրատարակումը «Հայրենիք» («(1915-1918)», «Գաղափար» (1916-1917), և «Գործավոր» (1919), ինչպես նաև ռուսալեզու թերթեր:

Ընդհանուր առումով Մահտեսի-Հակոբյանցների տպարանում 1877-1897 թթ. հրատակվել են առնվազն 83 անուն գիրք:

Ատենախոսության երրորդ ենթագլուխը տալիս է Բագրատ Տեր-Սահակյանցի և Մելքում Բարաջանյանցի տպարանների գործունեությունը Շուշիում (1907- 1920), որոնք ունեցել են կրթամշակութային նշանակություն: Այստեղ հրատարակվել են հայերեն և ռուսալեզու պարբերականներ:

Եզրակացությունների բաժնում ներկայացված են ատանախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները:

Ատենախոսության շուրջ հիմնական դիտողություններն են.

1. Հայեցակարգային առումով պետք է նշել, որ «Շուշի քաղաքի գրատպության պատմությունը (1828-1920 թթ.)» հանդիսանում է Հայկական մշակութային կյանքի վերծնունդը XIX դ. - XX դ. սկզբում՝ բաղկացուցիչ մաս:<sup>6</sup>

2. Այդ ենթատեքստում հետազոտության ժամանակահատվածը պետք է ունենար իրենց բնորոշումը և դասակարգումը.

ա. Լուսավորական դարաշրջանը 1828-1850 թթ.<sup>7</sup>, որի մանակիցներն էին ս. Էջմիածինը, հայ ավագանու ներկայացուցիչները և առանձին անհատներ:

<sup>6</sup> Тунян В.Г. Культурное возрождение армян в XIX- нач. XXвв. - в кн.: - Գավառի պետական համալսարան. Գիտական հոդվածների ժողովածու 2022, N 13, 15 էջ 241-250;

<sup>7</sup> Տե՛ս Մ.Հ. Մխիթարյան, «Արևելահայ մամուլի սկզբնավորումը և լուսավորչական շարժումը», Եր., 1994:

բ. Գրատպագրության կյանքի վերելքը 1850-ական թթ., պայմանավորված է Հայոց եկեղեցու ինքնուրույն կրթական համակարգի ստեղծմամբ և Հոգևոր ճեմարանի բացմամբ և  
ս. Էջմիածնում, ազգային կյանքի զարթոնքով, հայ բնակչության զարգացման մակարդակի բարձրացմամբ, գրատպագրության մակարդակի աճով:

3. Շուշի քաղաքի գրատպագրությունը եղել է Հայկական մշակութային կյանքի առաջատար կարևոր կենտրոններից մեկը:

4. Շուշի քաղաքի գրատպագրությունը արտացոլում էր ազգային և պատմական հիշողությունը, իրականությունը և ձևավորում ազգային գիտակցությունը:

5. Անհրաժեշտ է ստենախոսության ժամանակ ընդլայնել առանձին գործիչների պատկերներ, օրինակ՝ Ներսես Աշտարակեցու, լուսավորիչ եղբայրներ Արզանյանների և այլն:

6. Ազգային բախումները XX դ. սկզբում բացասական ազդեցություն ունեցան Շուշի քաղաքի գրատպագրության համար:

Ամփոփենք:

Ստենախոս Ստյոպա Հայրապետի Պետոյանի հրատարակած հոդվածները և սեղմագիրը համապատասխանում են ուսումնասիրության բովանդակությանն ու հիմնական դրույթներին:

Հետևապես, ստենախոս Ստյոպա Հայրապետի Պետոյանին հաջողվել է ստեղծել գիտական աշխատանք, որը լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի թեկնածուական ստենախոսություններին ներկայացվող պահանջներին, ըստ այդմ, միջնորդում ենք ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդին նրան շնորհել իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պ.գ.դ., պրոֆեսոր *Վ. Ղ. Մուրադյան* Կալերի Գեորգիի Թունյան

Հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտքարտուղար, պ.գ.թ., դոցենտ *Վ. Ղ. Մուրադյան*

21 մարտի 2023 թ.

